Մրցույթ՝ «Ալավերդի համայնքի «Երազ» մսուր-մանկապարտեզ»-ի մեթոդիստի (տնօրենի ուսումնական գծով տեղակալ) թափուր պաշտոնի /0.25 դրույք/, դաստիարակի /1.25դրույք/ և երաժշտության դաստիարակի /0,5դրույք/ պաշտոնների համար:

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով ունի բարձրա-գույն կամ միջին մասնագիտական մանկավարժական կրթու-թյուն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական

կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա ման-կավարժական գործունեության ստաժ՝համաձայն ՀՀ Կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջների:

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1)՝լրացվում է տեղում,

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայ ության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4)՝

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու ի րավունքը հավաստող փաստաթուղթ

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նա և զինվորական գրքույկ կամ զինվորա-կան կցագրման վկայական
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական

կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթն անց է կացվելու 2025 թվականի նոյեմբերի 06-ին,

ժամը 11:00-ին, ք. Ալավերդի Սանահին թաղամաս Միկոյան փողոց 8 հասցեում:

Փաստաթղթերն պետք է ներկայացնել անձամբ՝անձը հաստա-տող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի հոկտեմբերի 07–ից մինչև 2025թ-ի նոյեմբերի 03-ը ներառյալ, ամեն օր ժամը

11:00-13:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից ք. Ալավերդի, Սանահին թաղամաս Միկոյան փողոց 8 հասցեում:

Մրցույթն անց է կացվելու երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/l1978

Տեղեկությունների համար զանգահարել +374 99 43 56 67 հեռախոսահամարով: